

ՄՇԱԿ

Յարեկան զինը 10 բուրի, կես տարվանը 6 բուր.
Առանձին համարները 7 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Քայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.
Քայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻՎԱԿԱՆԻՆ

23-րդ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

23-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մենք ստանում ենք սեփական ՀՆԱԿՆԵՐՆԵՐ.
«ՄՇԱԿ» տարեկան զինը թէ Ռուս ստանում է թէ արտասահմանում 10 բուրի է, տասն և
մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ.,
հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվա-
նը՝ 1 բուրի:
«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌՄԱՎՊԱՍԱՆԻՆ (Քաղաքային և Բարձրագույն փոքրերի մանկան):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЬ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի կարծիքը հայոց հարցի մասին. Հայոց
հարցը և անգլիական համարութիւնը.— ՆԱԿԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միտարարի հրատարակ. Նամակ
Նախիջևանից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւններ. Նա-
մակ Թիւրքիայից. Նամակ Թիւրքիայից. Արտ. քրի-
ստոնք.— ՀՆԱԿՆԵՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գաղթականներ.

ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Անգլիական «Times» լրագրի մասնա-
ւոր աղբիւրներից ստացած տեղեկութիւն-
ների համեմատ, Կ. Պոլսի անգլիական դես-
պտի պաշտօնատեղում է հայոց պատրիարքին
և խորհուրդ է տալիս նրան ոչինչ զիջում
ներ չանել Բ. Գրանը:
Կ. Պոլսից Քիւրթի գործակալութեան
ընդ հեռագրում են, որ անգլիական դես-

պան Կերբի Բ. Գրան արած առաջադրու-
թիւնները պատճառով, Բ. Գրանը մի նա-
մակ ուղարկեց անգլիական դեսպանատուն,
ներողութիւն խնդրելով անգլիական պա-
տասան կառավարիչ Կորբի կողմնակցութեան
համար: Այդ խնդրագրին պատճառով վերջ է
տրվում:

Անգլիական «Daily Chronicle» լրագ-
րի Հոսթի թղթակիցը հարցրում է, «Սուլ-
թանը մի շատ երկար գրութիւն ուղարկեց
պապին, որի մէջ խնդրում է նրան Թիւր-
քիայի կողմը բանել և բարեխօսել Թիւր-
քիայի համար մեծ պետութիւնների ա-
ռաջ, որոնք այլքան զրգոված են հայոց
անցքերի պատճառով, յայտարարելով նը-
րանց, որ այդ բոլոր պատճառութիւնները Սա-
սունի կոտորածների մասին հնարած և
սուտ են: Պապը շատ անորոշ պատասխան
տուեց սուլթանին, նա հաւատացրեց սուլ-
թանին, թէ ինքն կամենում է օգնել նրան,
բայց յայտնեց նրան, որ նախ քան որ և է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ն Ե Ր

Սասունից զէպի Մուշի դաշտն իջող ճանա-
պարհի գլխին, դաշտի վրա նայող մի մեծ ժայռ
կայ, որին տեղացիք Գործ-Մուշի են կոչում. դը-
րա տակը նստած, կարելի է տեսնել մշուշալից
հօրիզոնում սպիտակաւ Ներքովան ու Բրթուռը,
Սիմ սարի սուր կատարն ու Մուշի դաշտի ծա-
ռազարդ գլուխը:
Այդ ժայռի տակ, զարնանային մի մութ գիշեր,
ճարձակում էր մի խորոյի: Կրակի մօտ խորված
էին քանի չափ հօտիկու և արեակէզ զինված
սասունցիներ, վաթաթված անթև թաղեայ վի-
րարիւններում և կամ նոյն իսկ հէնց միակ բաձ-
կանով:
Իւրաքանչիւրը նրանցից ուներ իր կողքին դը-
բած մի-մի հրացան. գոտու մէջ երևում էին սրե-
րի կոթեր և ատրճանակների կլոր գլուխներ:
Պառկել էին, թիկն առել. մի քանիսն արմը
կողմ քաշվել խոտակցում էին: Մէկը նրանցից մի-
այն առանձին երկարացել էր կրակին շատ մօտ,
կուլարի մէջ էր վաթաթվել և ոչ միայն ամբողջ
մարմնը, այլ և գլուխն իսկ թագցրել էր նրա
մէջ:
Ամենքը կրում էին սասունցու խաբուկ կոշ-
վող թաղեայ կօշիկ, բացի կրակի մօտ ննջածից,
զէպի որը միւսների երբեմնակի դցած ակնարկ-
ները ցոյց էին տալիս, որ նա խմբի գլխաւորն
էր լինելու:
Յածում, խորոյի լոյսի շրջանից դուրս, ար-
րում էր մի խոր մթութիւն, երբեմն աղօտ կայ-

ծերի պէս երևում էին կրակներ, ապա նորից
մարում էին, սև բոցով ծածկելով ԲարեՄուշի
շրջակայքը:

Սարահարթի գլխին, իր ընկերներից հեռու
պառկել էր մի ուրիշ սասունցի ու ցած էր նա-
յում. հրացանը ձեռքերի մէջ, աչքերը մթութեան
մէջ բացած՝ աշխատում էր տեսնել հեռուները:
Այդպէս էր սասունցի այդ խմբի զէրքը, երբ
գլխաւորը շարժվեց, իր նիւսը, գրեթէ կանացի
դէմքը դուրս հանեց կուլարի մըջից և հարցրեց.
— Գիշերը շատ է առաջացել:
— Հրամանը ես, ձայն առին մի քանիսը:
— Եկող չը կայ դեռ, Ախօ, հարցրեց նա նորից:
Չանապարհի ծայրին նստող գիշերապահը դար-
ձաւ և պատասխանեց.
— Ինձ թվում է, որ մէկը բարձրանում է դէպի
վեր, բայց դեռ որոշ ոչինչ չէ իմացվում:
Սասնաւոր խոտակցութիւնները դադարեցին,
ամեն ոք ուղղվեց, նստեց: Գլխաւորը բարձրա-
ցաւ, գլուխը կուլարից բոլորովին դուրս հանեց
և քննադի ձայնով ասեց.
— Շատ կուղէի որ առաջ զնայիք, բայց ինչ-
պէս աննում էք, դեռ մերձեց չը վերադարձան...
վախենում եմ, որ ճանապարհը արդէն պաշարված
լինի:
— Բիէ էլ չը սպասեմք, դուրբան քըզի, մէջ
մտաւ գրեթէ արեւմտեան մի հակայ, առանց լուրի
նր իջնեք, չէ որ Մշու դաշտի «տղիներն» էլ
պիտի պատրաստ լինեն:
— Ես էլ հէնց դրան եմ սպասում. շատ կուղէի
իմանալ այդ գոմերցի Պետրոսի խմբի մասին, որ
բազարացիների հոգեառն է դարձել: Տեսնեք որ-
քան մարդիկ են նրանք:
— Ասում են որ քիչ չեն, խոսեց մէկը.— բայց
էլ մէկի կարծիքն են. բայց ամենից կարծիք

վճողական բայլ անելը, ինքն պէտք է
սպասէ միջազգային քննիչ յանձնաժողովի
զեկուցմանը:

Անգլիական լրագրիչների ստացած մաս-
նաւոր տեղեկութիւնների համեմատ, բոլոր
գործերը կատարելապէս կանգ են առել Սի-
լիսում այն պատճառով, որ բոլոր վաճառա-
կանները զլիսաւոր վիճակներում բանա-
րում են փտում:

Լօնդոնի «Daily News» լրագրի Կ. Պոլ-
սի թղթակիցը գրում է յունիսի 6-ից
հետեւելով. «Հայաստանից ստացված մաս-
նաւոր տեղեկութիւնների համեմատ, մահ-
մեղական ազգայնականութիւնը այնտեղ սա-
տիկ զրգոված է զանազան ֆանատիկանե-
րի հակաքրիստոնէական քարոզների և նոյն-
պէս կառավարական պաշտօնականի դադա-
նի զրգումների պատճառով: Շատ շրջաննե-
րում մահմեականներին մեծ դժուարու-
թեամբ են զսպում, որպէս զի չը յարձակ-
վին քրիստոնէական վրա: Վախենում են,
որ նոր անկարգութիւններ կը ծագեն աւե-
լի էլ մեծ ոյժով:»

Կ. Պոլսից հարցրում են. «Սուլթանը
մի նշանաւոր յայտարար ստացաւ, որ ստո-
րազրկ են մահմեդական ուղեւորները Հնդկաս-
տանից և որի մէջ սակած է, թէ Հայաս-
տանում գրիստոնէաների կրած հալածանք-
ները նստեցնում և խայտառակում են իս-
լամի կրօնը ամբողջ աշխարհի աչքում: Բա-
ցի զրանց, ուղեւորները համազում են սուլ-
թանին ազատվել մօլա Աբրուէզո արաբի
ազդեցութիւնից, որին մեղադրում են այն
բանում, որ նա հակառակ է զնում մարգա-
րէի օրէնքներին: Այդ մօլան անիմված է
իր գործերի համար և այդ պատճառով
պէտք է քրտովի: Վերջաբանութեան մէջ
ուղեւորները զրգուցանում են սուլթանին, որ
եթէ նա անուշադիր կը վերաբերվի, հեշ-
տութեամբ կարող է զրկվել գահից: Պաշ-
տօնական թիւրքաց լրագրիչները շարունա-

կում են պնդել, թէ հանգստութիւն է ար-
րում Հայաստանում:»

Կ. Պոլսից Քիւրթի գործակալութեան
ընդ հարցում են Վիեննայի վրայոյի որ
իզմիրեան պատրիարքը զիմեց արդարապա-
տութեան միտարարին մի նամակով, որի մէջ,
մասնացոյց անելով պատրիարքի պաշտօնը
ստանձնելու ժամանակ իր գաւած հարգու-
թեամբ թիւնների վրա Հայաստանի մասին,
յայտարարում է, որ իրան վերապահելով
բողոքելու իրաւունքը այն կարգերի դէմ,
որոնցից տանջվում են հայերը, ինքն ամե-
նից առաջ պարտաւոր է ուշադրութիւն
դարձնել Սասունում կատարված սարսափե-
լի անցքերի վրա: Ի նկատի ունենալով այն
փաստը, որ Մուշի եպիսկոպոսը և ուրիշ ե-
պիսկոպոսներ հեծում են բանում, չէ կա-
րելի ուրիշ հոգեւորականներ ուղարկել այն-
տեղ: Գործերի գրութիւնը քննելու համար
իզմիրեան վճեց մի առանձին զեկուցաւ ու-
ղարկել Սասուն:

Վիեննայի «Standard» լրագրին հեռագ-
րում են յունիսի 9-ից հետեւելով. «Հաս-
տատ հիմք կայ հաւատարմ, որ Բ. Գրան
ամբողջ ետանդը ներկայումս լարված է մի
նպատակի համար, այն է— ապահովել բա-
ցասական դատաւճիւր: Սասունի քրտութեան
գործում: Մենք լսել ենք անվիճելի աղբիւ-
րից, որ այդ նպատակի համար զիմել են
հայ կաթողիկոսների պատրիարք Աբրահամի
ճառագրութիւններին, որը միանգամայն բա-
րի համար չունի թիւրքաց մայրաքաղա-
քում: Մեկ հարցրել են, որ նա հրահանգ
է ուղարկել Մուշի իր ներկայացուցչին, որ-
պէս զի նա աշխատի, որ հայ կաթողիկոս-
ընդ յանձնաժողովին տանիկներին համար նը-
պատասուր ցուցմունքներ տան: Բանի որ
ուրաբը նոյն ցեղից են և լատիւթիւն նը-
ման խոտարարական հայերին, որոնք են
միայն ենթարկվել կոտորածներին, կար-
ծում են որ օտար զեկուցաներին կարելի

ցաւ, հրացանը դէպի նրան պարզեց և զուցից հա-
յերէն:

— Ո՛վ է այդտեղ, որ դալիս է:
Եկողը կանգ առաւ. պարզ երևում էր, թէ ինչ-
պէս հրացանի կոթը դեռնին դրեց, պահ մի դի-
տեց խումբը, ապա նորից անսթապրեց և երկու
քայլ առաջանալով՝ կանգ առաւ խորոյի արի-
ւած լոյսի ամենալուրջին աղօտ ծայրում:
Երկարահասակ էր նա, ցեխոտ հաղուստով և
երբ քիչ յետոյ լոյսի մէջ մտաւ, ամենքը տեսան,
թէ նա որքան մտեղային գունատ դէմք ունէր:
Փոս էին ընկել աչքերը, մազերը զզգզված,
հագուստը գրեթէ պատռաւված: Բայց մէջքին
դաշոյն, ատրճանակ և ձեռքին մի լաւ հրացան:
— Ո՛վ է, հարցրեց մեղմութեամբ գլխաւորը:
Եկողը էլի առաջ եկաւ, յետոյ խուլ ձայնով
հարցրեց.
— Սպիտակ— ձիւնոյն է, որ խոտում է:
Գլխաւորը ժպտաց:
— Սասնում ձիւնաւոր չէ կարող լինել, բարեկամ,
ստաց նա— սակայն այդպէս են կոչում ինձ. ո՞վ
ես դու, քիչ էլ մօտ եկ, որ երեսը տեսնեմ. կթէ
բարեկամ ես, ինչու ես ծածկվում:
Եկողը էլի առաջ եկաւ և իր վշտալից դէմքը
դարձրեց դէպի կրակի լոյսը:
Գլխաւորը նայեց զէմբին թէ չէ, աչքերը փայ-
լեցին:
— Պետրոս, զուցից նա— այդ դու ես:
— Գոմերցի Պետրոսն է, մեծապիկ միւսները:
— Ես եմ, առաջ Պետրոսը:
— Եկ ուրեմն. եկ մօտս այստեղ. նստիւ, յոգ-
նած կը լինես:
— Շնորհակալ եմ, պատասխանեց Պետրոսը,—
ես եկել եմ ուրիշ բանի համար:
— Կասես, կասես, ժպտաց Սպիտակ— ձիւնաւորը

կը լինի խաբել այս եղանակով: Այդ կողմից զինգասները պէտք է շատ զգուշութեամբ վերաբերվին հայ կաթողիկոսներին վրայ: Կայտնաբերված թուրքական զորքերը, քննիչ յանձնագրով վերայնուցեան պատճառով, կոտորածներին լուսաւորչական-քրիստոնէայ վկաները հեռացրած են այդ զաւառից՝ կայսրութեան ուրիշ մասերը:»

Կ. Պօլսից «Daily News» լրագրին զբրում են. «Բ. Գրան յամառութիւնը որ նա մերժում է և չէ թոյլ տալիս օտար լըրդ-թակիցներին գնալ փոքր Ասիա և մանաւանդ Սասուն, չափազանց անախորժ պատարտութիւն գործեց զիստատիական շրջաններին վրայ, որովհետեւ զառախարհութիւնը իր համար շատ աննպաստ եղրակացութիւններին՝ Հայաստանի գործերի զբրումեան մասին: Կարծում են, որ եթէ թիւրքիսն ոչինչ ծածկելու չունէր այդ կողմից, նա ինքն պէտք է ցանկանար, որ աւելի անապառ զիստոյն լինէին Հայաստանում, որպէս զի նրանք տեղեկութիւններ կարողանային տալ զործերի իսկական զուր-թեան մասին: Թիւրքիսի այդ բռնած զիրքը ստիպում է ենթադրել, որ քննիչ յանձնագրովի զործունէութեան հետեւանքները վերջ ի վերջոյ, բացասական կը լինեն:»

ՀԱՅՈՅ ՀԱՐՅՐ ԵՒ ԱՆԳԻՒԱԿԱՆ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆԸ
(Ստորին թղթակցութիւն)

«Անգլիայի դէմ տիկին Նովիկովայի օգտած մեղադրական ճառից մի քանի օր յետոյ, անգլո-հայկական մեծ միտինգ տեղի ունեցաւ S-t Martin's Townhall-ում, Լոնդոնի կենտրոնում: Այդ միտինգում արտասանած ճառերի զիւրաւոր միտքը կատարեալպէս նման էր տիկին Նովիկովայի նամակի մտքին, այսինքն, անգլիական հետաքրքիր պնդում էին ասելով՝ «մենք մեղաւոր ենք», իսկ հայերը ձայնակից էին լինում նրանց ասելով՝ «Այո, դուք մեղաւոր էք:»

Կանոնիկոս Մակոյ սանց.—Անգլիան զրկեց թիւրքահայաստակ քրիստոնէաներին Ռուսաստանի հովանաւորութիւնից, իսկ ինքն նրանց համար ոչինչ չարեց:»
Մի ուրիշ հետաքրքիր, աւելացրեց.
—«Մենք ջնջեցինք Սան-Սանֆանսի դաշնագիրը և արգելեցինք Ռուսաստանին պաշտպանել հայերին:»

—Իսկ այժմ նստիք ինձ մտ... այդպէս Գէն, ասողները, մեր կտրիճ Պետրոսին ուտելու բան-մասն տուէք:»
—Անթիլ չեմ, ասաց Պետրոսը, այլ խօսել եմ ուղում քեզ հետ:»
—Խօսիր, ասաց միտ ժպտող զեմբին խմբապետը.—ես քեզ լսում եմ... բայց նախ ինձ ասա, թէ ինչ լուր ես բերում դաշտից:»
Պետրոսը քիչ լռեց, յետոյ ծանրութեամբ սկսեց խօսել:»

—Չունենա յոգնեցին դարձելով, ասաց նա— բարեկեցիկների ցեղը մէջ շատ կոտորած արի, բայց իստաֆ-աղան զեւ ձեռքս չընկաւ: Գաշտը արեան մէջն է: Երբ ես սկսեցի, քրիւղերը կատարեցին, խմբեր կազմեցին, Մշից զօրք եկաւ և հայերի զիւրեղը այրվում են, հայ զիւրեղեք կոտորվում... Ասա, Սպիտակ—ձիւտոր, դու կարդացար, խելք մարդ ես, ասա ինձ, արդեօք յանցանք չէր իմ գործածը: Չէ որ ես զրգուցի այդ շներին ոտքի ելնելու և այժմ ասա նրանք էլ հայ չէ մնում, որ չը սպանեն, էլ զիւր չէ մնում, որ չայրեն: Չէ որ նրանք զեւ այնքան կատաղած չէին, ես կատարեցին իրանց:»

Պա՛ս մի լռեց, յետոյ նայեց բոյսրին և շարունակեց.
—Բոլոր դաշտեցիք անխճում են ինձ, այդ անխճը ծանրանում է վրաս, ասա ինձ, Սասնցոյ մե՛ծ, արդեօք իրաւունք ունեն նրանք ինձ անխճելու: Երկու տեսակ մտածութիւններ ինձ շուարեցրել են: Մէկ կողմից տեսնում եմ, որ իմ արածս վատ չէ: Ինչ է արածս. պաշտպանութեան մի կռիւ այդ աւազակ ցեղերի դէմ, որոնք երկուս մարկները ի վեր է, որ կին չէ թողնի պղծեցին, զիւր չը թողնի այրեցին, մեր դաշտերն արիւնով ներկեցին, մեր հայը խլեցին, մեր սրբութիւնները ապականեցին... Իսկ միւս կողմից

իսկ պրօֆէսոր Ազար Բիտ նկատեց.

—«Անգլիան պատասխանատու է այն ըկօրութեան անապառութեան համար, որոնց 1876 թիւն մտցնելով Բոսնիայում և Հերցեգովինայում մեծ պետութիւնները կամենում էին սպանացող վրտանդի առաջն տանել, և Անգլիան մեղաւոր է զրանից յետոյ սկսված պատերազմի համար: Անգլիական նաւատորմը հովանաւորում էր թիւրքիսին այն ժամանակ, երբ Ռուսաստանը արիւժ էր թափում քրիստոնէաների համար: Այո, լէզիներ և ջնջումներ, իրանց սզատութեան և իրանց զրութեան բարեբան համար բոլոր արևելեան քրիստոնէայ ժողովուրդները պարտական են Ռուսաստանին... միմիայն, նրան է պատկանում լուսաւորութեան և քաղաքացիականութեան բոլոր աշտութիւնների պատիւը: Բոսնիայում և Յուսաստանում, Սերբիայում և Բալքարիայում:»

Ահազին դա՛վճը, որը, բայց երկու տասնեակ հայերից, լի էր անգլիացիներով, այդ խօսքերը արտասանելու ժամանակ զգրում էր ծափահարութիւններից, տանահարութիւնից և բացականչութիւններից՝ Shame! (ամօթ):

—Այդ օրպէսից զժուար էր չը հաւատալ այդ միտինգում հաւաքվածների անկեղծութեանը: Միտոնարներից մէկը աղաղակում էր. «Անգլիան այլ ևս երբեք ոչ կը պատերազմի եւ ոչ էլ փող կը ծախսի թիւրքիսի պաշտպանութեան համար:»

—«Այդ քիչ է, —սզաղակում էր մի ուրիշ Reverend.—պէտք է անյապաղ ընդհատել զիստատիական յարաբերութիւնները Բ. Գրան հետ, որպէս զի թաղուհու մաքուր ձեռքը չը պղծվի տմարդի բռնակալութեան ներկայացուցչի համբոյրով:»

—«Այդ էլ քիչ է, բացականչեց երրորդը.—այդպիսի զէպքերում պատերազմի ևս արդարացի է:»

Չը դիտեմ, արդեօք սխալվեցայ ես նկատելով հաւանութեան թոյլ նշաններ, բայց հայերը, ըստ երեկոյնի, ինձանից էլ օտար վերաբերվեցին անգլիացիների ասածներին: Պ. Թումայանը ուղղակի ասեց.—«Այդ բոլորը լաւ է, բայց չը պէտք է զրանից յետոյ տուն գնալ և հանգստանալ այն համոզման մէջ, թէ հայերի համար մի բան արված է: Այդ միտինգը պարտաւորութիւն է դնում համակրութիւն յայտնողների վրայ շարունակ աշխատել հայերին օգնութիւն հասցնելու համար: Այլապէս զրանից աւելի մեծ վնաս կը լինի, քան օգուտ: Թիւրքերը այդպիսի զէպքերում աւելի էլ հալածում և կեղեքում են:»

Այնչափան է, որ Թումայան և ուրիշ հայերը, բարձրաձայն հաստատելով նրա խօսքերը, յիշում

տեսնում եմ, որ իմ մղած այդ կռիւը զրգուցեց շատ քիւրի ցեղերին, որոնք զինք առան և քաջաւերված օսմանցիներով սկսեցին դաշտը աւերել... Բայց ես բան թէ չունեմ, որ կողմը գնամ, որ կողմից հաւ ձեւ բոլորին. քանի կոտորում եմ, այնքան աւելի կատարում են: Մինչև այժմ հանգիստ մնացած ցեղերն անգամ զինք են վերցնում և մինչև այժմ յարձակում չը կրած հայ գիւղերն էլ ենթարկվում են աւերածութեան, կոտորածի... Եւ այս բոլորի մեղաւորը ես եմ զուրս գալիս. որքան թշուառ եմ, որքան անբաղք... Ասա ինձ, Սպիտակ-ձիւտոր, դու շատ ես կարդացել, շատ մասն եկել, շատ էլ բան գիտես. ինչ անեմ ես, ներքէջ արածս յիմարութիւնները, ճեղք չէ անէ՞ցները, որոնք հաւաքվել են գլխիս... Ինչ անեմ, էլ հոսանքը դադարեցնել չեմ կարող, բացարի նրան և այժմ նա հեղեղում է երկիրը... անխճալ չեմ ես, ո՞՞ր բարձր չեմ ես, մի ամբողջ ժողովրդի կոտորածի պատճառը չեմ ես...»

Լռեց ու զուրս կրծքին խոնարհեցրեց. նրա դէմքը այնքան խոր վիշտ էր արտայայտում, նրա խօսքերը այնքան տխրացին էին հնչում, որ բոլորը յուզվել էին: Լեւոնցիք հասկացան նրան: Մի ծանր հարց էր դա և ոչ քիչ չը գիտեր թէ իսկապէս Պետրոսը պատասխանատու էր դաշտի այդ զրութեան համար, թէ, ընդհակառակն, նա մի հերոս է, որի վրա զմայլել միայն պէտք էր:

Հերոս թէ ո՞րքազորք. աղաւորութեան ախոյան թէ ընկերասպան.—ասա թէ ինչ չէին կարողանում վճռել լեւոնցիք:

Լուս էր նաև խմբապետը, նա խորում էր և ժատովը գետնի վրա դնել քաշում:

—Ո՛չ, խօսեց վերջապէս Սպիտակ—ձիւտորը: Գլուխը ցնցելով.—ոչ, դու ոչ անխճալ ես և ոչ էլ ո՞րքազորք: Գու՛մ մի մարդ ես, որ իր և հայրենիքի վրէժն է աւանում. դու մի մարդ ես, որ ա-

նն անգլիական նախկին համակրութիւններին հետեանքները, որոնք զրգում էին հայերին անապառ շարժումներ անել և զրգում էին թիւրքերին սաստակացնել իրանց բռնութիւնները: Եւ յիտարի, այդ միտինգը, ինչպէս և բոլոր մնացած խօսակցութիւնները, պարզ ապացուցանում են, որ եթէ Անգլիան այժմ թէպէտ և չէ արամադրված, ինչպէս առաջ, պատերազմի և ծախսեր աւել թիւրքերի համար (այդ ծախսերը առաջ չահաւէտ էին համարվում, ինչ որ չէ կարելի սպասել ներկայումս), բայց և դիտաւորութիւն չունի որ և է արտակարգ քայլ անել հայերի համար:

Այդ արդէն երևում է անգլիացի հետաքրքիր իւրաքանչիւրի խօսքերից Ռուսաստանի հետ բարեկամանալու մասին, որի առաջին պտուղը, ասում են նրանք, պէտք է լինի միաբան միջամտութիւն յոգաւ հայերի: Մի քանիսները մինչև անգամ պարզ ակնարկում էին, որ Ռուսաստանը կարող է չուտով համբերութիւնը կորցնել, որ նրա սովորութիւնն է պաշտպանել քրիստոնէաներին զնքով և այլն:

Արդեօք դա մի հրաւեր չէ Ռուսաստանին՝ յանձն առնել ծախսեր և զոհեր՝ անգլիական ցանկութիւնները կոտորելու և անգլիական նպատակները իրագործելու համար:

Բայց սրպիսի ցանկութիւններ և նպատակներ են դրանք: Այն ընտր երեքպետեան դաշնակցութիւնը, որով պարծնում են անգլիացիները, կայանում է նրանում, որ Ռուսաստանը և Անգլիան համաձայնութիւն են կայացրել քննել Ֆրանսիայի հետ միասին Սասունի անցքերը: Այդ քննութիւնը միայնի բոլոր հետաքրքիր անօգուտ և աւելորդ համարեցին. նրանց պահանջները բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունեն: Պրօֆէսոր Ա. Բիտ, անգլո-հայկական ընկերակցութեան անունից, ձեռկերպեց այդ պահանջները հետեւալ կերպով.

- 1) Քրիստոնէայ անկախ գեներալ նահանգապետ:
- 2) Առանձին միջոցաւ, որը ենթակայ կը լինի միմիայն գեներալ նահանգապետին:
- 3) Անկախ դատարան:
- 4) Անկախ ֆինանսները Հարկը կարելի է վճարել Կ. Պոլսում, բայց հարկերը պէտք է առնվեն տեղի վրա և պէտք է գործադրվին միմայն նահանգի կարիքների վրա:»

Ուրիշ հետաքրքիր պահանջում էին էլի, որպէս զի, ինչպէս Լիբանանում, նահանգապետը նշանակվի սուլթանից մեծ պետութիւնների համաձայնութեամբ: Մի քանիսները, վերջապէս, այդ էլ քիչ էին համարում, այլ առաջարկում էին Նու-

դատութիւնը ստանալու համար ապստամբութեան գործն է բարձրացնում... Ամեն մի այդպիսի գործարիւն, չարիքներ, կոտորած և առաջանում: Արիւնն է, որ սպառնութիւն է տալիս Սուլթան բան է այդպիսի աղաւորութիւնը, որ կանգնվում է ընկերների, նախնիների զիակների և նրանց արիւնի լճակների մէջ, բայց առանց զօհի աղատութիւն ձեռք չէ բերվում: Գո ասած իրողութիւնները անխուսափելի են. քո արածը ոչ թէ յիմարութիւն է, այլ այնպիսի գործ, որի վրա զմայլել է պէտք... Ես քո ընկեր եմ, Պետրոս, եթէ եկել ես միջ միանալու, ասա սաստուցիք... Իսկ եթէ դաշտեցիք իրանց պաշտպանել չը գիտեն և կոտորվում են,—թող կոտորվեն: Ով ընդունակ չէ անձնապաշտպանութեան, նա արածանի չէ գոյութիւն ունենալու... գնանք շարունակելու սկսածը, մենք քո ընկերներն ենք...»

Պետրոսի զէմքը քիչ զուարթացաւ:

—Ուրեմն, հարցրեց նա,—Սպիտակ-ձիւտորը գետնում է, որ դաշտեցոց անխճը նշանակութիւն չունի: Չէ որ այդ մարդկանցից շատ շատերը ինձ պատճառ են համարում այդ զէպքերի և զէպքերի՞ աղէտների ուրեմն չէ որ ես արեւտարքի մի շարագործ եմ հանդիսանում մի ընկերասպան:

—Գու՛մ սխալվում ես, Պետրոս, ոչ զէպքերն են աղէտ և ոչ էլ դու արեւտարքի: Գրօշը պարզված է, նա արիւնի մէջ է կանգնեցրած: Առանց արիւնի փրկութիւն չը կայ...»

—Արիւն, արիւն... մտածաց Պետրոսը,—բայց միթէ չէր կարելի առանց արիւնի անել այդ բոլորը:

Սպիտակ ձիւտորը միանգամից լուրջ կերպարանք առաւ, նայեց Պետրոսին, և ասաց վճռողաբար.

—Ո՛չ, ուր խլող կայ, խլող էլ կայ. մէկը ուղում է չը տալ, իսկ միւրը ուղում է առնել. կը-

բար փառայի պրօֆէսոր գործադրութիւնը, որով առաջարկվում է նոյն այդ տեսակ մի կազմակերպութիւն մտցնել այն բոլոր գաւառներում, ուր ապրում են հայերը:»

«Новое Время»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՆԻՍՏՐԻ ՀՐԱԽԵՐԸ

Երկրագործութեան մինիստր Երմոլով Թիֆլիս եկած ժամանակ յայտնեց, որ նա մեծ նշանակութիւն է տալիս հասարակութեան կարծիքին, ձայնին և գործակցութեան, և հրաւեր կարդաց, որ տեղական ոյժերը օգնութեան գան մինիստրութեան՝ թէ մշակելու զանազան խնդիրներ և թէ իրագործելու կեանքի մէջ հաւանութիւն գտած ծրագիրները:

Համաձայն այդ համարիկի և միանգամայն արդիւնաւէտ հայեացքին, պ. մինիստրը այժմ դիմել է կայսերական կովկասեան Գլխաւորտեսական ընկերութեան խորհրդին, առաջարկելով քննութեան և հետազոտութեան ներկայելու առ այժմ երեք խնդիր:

Ահա մինիստրի թղթի բառացի բովանդակութիւնը:

«Անցեալ արշան, կովկասի մի քանի տեղերը այցելած ժամանակ, ծանօթանալով այդ երկրի գիւղատնտեսական արդիւնաբերութեան հետ, ես ի հիշատի առայ, որ Անգլիոյ վկայի գիւղատնտեսական շատ խնդիրները կարօտ են ամենամանրաժեշտ քննութեան և հետազոտութեան, տընտեսութեան զանազան ճիւղերը զարգացնելու նըպատակով:

«Կատարակայարմար գտնելով այդ խնդիրների մշակութեան համար հրա իրել տեղական ոյժերը, յանձնի կայսերական կովկասեան Գլխաւորտեսական ընկերութեան, և ցանկանալով ունենալ նրա կարծիքը, պատիւ ունեմ խնդրել ընկերութեան խորհրդից ներկայացնել ընկերութեան քննութեանը Անգլիոյ վկային վերաբերալ հետեւեալ խնդիրները:

- 1) Բանակապարտութիւնը զարգացնելու միջոցների մասին:
- 2) Երկնի ցանքերու վնասակար աղբեցութեան սահմանափակելու միջոցներ և բրինձի մշակութեան կանոնաւորելու մասին:
- 3) Ծերամապահութեան զարգացնելու միջոցների մասին:

Այս հրաւերը անշուշտ միայն առաջին փորձն է, որին կը հետեւեն և միւս խնդիրների մշակու-

ալը անխուսափելի է: Եւ այդ անխուսափելի կռիւը արդէն սկսված է...»

Ասեց ու վերապաւ:

Այդ միջոցին մի մեծ սուրբ հասաւ նրա ա-

կանջին: Հսկող երիտասարդը դարձաւ և ասաց.

—Տղէքները դալիս են զաշտի կողմից:

Բոլորը բարձրացան ու զենքերն առան:

Քիչ յետոյ մի քանի ստեւերներ երևեցին և մէ-

կը նրանցից գոցեց հեռուից.

—Քիւրդեր ու գօրբեր խառն դալիս են...»

Սպիտակ-ձիւտորը ժտեցաւ Պետրոսին, ձեռքը նրա ուսին դրեց և ասաց.

—Այժմ, Պետրոս, ցոյց տուր որ վրէժ առնել զիսա...»

Ապա դարձաւ բոլորին ու գոչեց.

—Տղէքներ, պատրաստ լինե՞ք կամ մտնելու կամ մեր լեւները պաշտպանելու... կրակը մարէք, թշնամու զէնն երենք:

Իսկոյն, մի քանի րօպէի մէջ ոտնակոխ արին ու ձէնի մէջ հանգրքին պլպլացող լարոյկի վաւ-

ժող փայտերը: Բարձրացաւ ծուխ, շողի, տժտժոց... յետոյ լսվեցին զէնքերի շալչուններ և նորածին մի աղօտ լոյսի միջից երևացին լեւոնցիք, որոնք սահելով իջնում էին զէպի մօտ խորութիւնը:

Մի քանի րօպէ լսվեց նրանց ոտնաձայնը, յետոյ լռեց ամեն ինչ:

Ժայռերի արանքներից սուրում էր լեւոնային զօրեղ քամին ու հարուածում Սասունի ապառաւ ժոտ լեւներին կուրծքը:

Եւ այդ նոյն միջոցին Արևելքի կողմից աղօթարանն էր ծագում, որի լոյսը մշուշաձև տարածվում էր Սև լեւների գագաթների վրա և լուսաւորում նրանց ամենահեռու գագաթները.

թեան համար առաջարկութիւններ: Կայսերական կողմէն Գիւղատնտեսական ընկերութեան վրա մեծ պարտք կայ սպառողական, որ իրարի տեղական գործողները և հիմնարկութիւնները կարծիքները և ձայնը լուրջ և հիմնովին են և էպպէս կարեոր տեղական գործընկերութեան ժամանակ: Ահա ընկերութեան գործողները համար մի յարմար առիթ ցոյց տալու ընկերութեան բարոյական ոյժը և ձեռնհասութիւնը:

ՆՄՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋՆԻՍՆԻՅ

Յունվարի 9-ին

Այսօր կատարվեց Գ. Անպէտեանի թատրոնը, որը ամբողջ 9-ին յանկարծակի վախճանվեց շան գոցեալը աղիւս մարդ էր և Բոստովի հայ կոթնիայի զուլին էր: 15 տարի առաջ առանց կողակի նա սկսեց իր գործը և հազար ու մէկ խոնջոտների դէմ կռուելով, ձեռք բերեց մեծ հարստութիւն, մի և նոյն ժամանակ ամբողջ հայ հասարակութեան սէրը ու յարգանքը գրաւելով: Իսկ օրինակ էր կարողանալ եղբայրներին և ամեն մի ազգային գործում նա անպակաս էր խօսքով, գործով և առատաձեռն նուէրներով: Ծառ պատկերներ և ահագին բազմութիւն նրա յուղարկութեան ժամանակ շոշափելի ապացոյց էր, որ հանգուցեալը բոլորին սիրելի էր:

Նախնականցիները անհամբեր սպասում են Վեհափառ Կաթողիկոսի այստեղ գալուն: Այստեղ պատրաստվում են յոգուտ կարօտներին փոշ ժողովել: Սակայն, զորազարար, նոր-նախնայնացիները այն զարգացման աստիճանին չէ հասած, որ կարողանայ զիտակցաբար օգնել իր հեռուոր եղբայրներին: այնու ամենայնիւ, եթէ ստորագրութեան գլուխը կանգնած լինի մի ազգայնութիւն ունեցող աղա, հասանական է, որ ստորագրութիւնը աջողվի:

Այստեղ լուր տարածվեց, որ Կիրեղ եպիսկոպոսը պիտի նշանակվի Բեսարաբիայի առաջնորդ: Մենք բոլորովին անհիմն ենք կարծում այդ լուրը, քանի որ նա, դեռ աշուտ վարդապետ եղած օրերը, չէր կարողացաւ գրաւել ժողովրդի համակրութիւնը: Իր ժամանակին «Մշակի» մէջ տպված էր Նոր-Նախնայնացի թղթակցութիւն Կիրեղ վարդապետի ճառերի մասին, այդ ճառերը վատ տպագրութիւն էին թողնում բոլորի վրա:

Մենք կը ցանկանայինք Բեսարաբիայի առաջնորդ տեսնել Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանին:

Գր. Չայլուսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՊԻՐ

Ներէ, թիֆլիսում ստացվեց հետևյալ հեռագիրը: «Ներքարթլի, ամսիկ 17-ին, թիֆլիսի քաղաքացիները իզմայլով, ձայնարարներ կոչուեցան և Արիստովի հետ բազմ ունեցան ներկայանալու Նոյա Մեծութիւններին, մատուցանել աղ ու հայ և յայտնել թիֆլիսի ազգայնական շնորհաւորութիւնները: Քաղաքացիները բացի դրանից յայտնեց, որ թիֆլիսցիները երջանիկ կը լինին բազմ ունեցող ուղեւորներու: Կայսրին թիֆլիս քաղաքում Կայսրը պատասխանեց՝ «Այդ կը լինի», և շնորհակալութիւն յայտնեց աղ ու հացի և շնորհաւորութիւնների համար»:

Յունվարի 17-ին, Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Կովկասեան կառավարչապետին:

Ներէ, յունվարի 18-ին, լուր ստացանք, որ Մատթէոս պատրիարք իզմիրեանի և Բ. Դրան մէջ յարաբերութիւնները ընդհատված են:

Լսում ենք, որ ներկայ թիֆլիսի նոյնընկեր 2-ին պէտք է օտնվի Վիեննայի Միլիթարեան միաբանութեան արքայա՛ր: Այսօրեան արքայակազմի զահանայութեան 50-ամաջ յօրեկանը:

«Memorial Diplomatique» լրագրի խօսքերով, Կ. Պոլսի առաջ զեպան Նիկիթով չուտով ուրիշ պաշտօն կը ստանայ:

Ամենայն հայոց Կաթողիկոսը արքեպիսկոպոսութեան կոչումն է տուել Կ. Պոլսի հայոց պատրիարք իզմիրեանին:

Կիրակի օր, յունվարի 15-ին, Մոնթե եկեղեցում խորէն եպիսկոպոս Ստեփանէ մի քարոզ

խօսեց, նիւթ վերցնելով մի քանի առօրեայ խընդիրներ: Պերճախա առնարանը, ինչպէս մեզ հարողում են, իր արդու խօսքով և խելացի մտքերով ահագին տպագրութիւն թողեց բազմաթիւ հասարակութեան վրա:

Ներէ, ամսիկ 18-ին, Վեհափառ Կաթողիկոսը այցելեց Ներսիսեան դպրոցը: Հերթակա հոգարարձու Ս. Գարութիւնեանը ներկայացրեց մի զեկուցումը զպրոցի տնտեսական վիճակի մասին, իսկ տեսչի պաշտօնակատար Յ. Սաղաթեանը՝ ուսումնական դասի մասին: Վեհափառ օրհնելով հոգարարձուութեան գործունէութիւնը քաջալերեց հոգարարձուներին առաջ տանել զպրոցի կառավարութեան գործը այն ընթացքով, որ սկսված է: Վեհափառի գալու պատճառով զպրոցի մուտքը մինչև դարձել ծածկված էր կարմիր մահուցով, իսկ դարձելը զարգարված ծաղիկներով և կաթողիկոսների պատկերներով: Երկուցիկ խառնը երգեց մի քանի շարականներ, և ազգային երգեր: Վեհափառ մնաց զպրոցում երեք քառորդ ժամ:

«Արեւիկ» լրագրում կարդում ենք. «Յա.օք կը ծանուցանենք թէ Գովհաննէս աւագ քահանայ Հիւնքեարայէլեանեան վախճանեց է խոր ծերութեան մէջ: Գանձին Հիւնքեարայէլեանեան տէր հոր կանխատեսայ մեր ամենէն եղական դէպքերէն մէջը ոչ միայն իբրև ամբաստի ու մաքրակրօն եկեղեցական, այլ և զիտանական լեզուագէտ, հմուտ հին յունարէնի ու ասորիերի, հեղինակ լեզուաբանական այլ և այլ գործերու, որոց մէջ առաջին տեղը կը բռնէ «Առաջաբանական Բառարանը», արդիւնք բազմամայ ու խղճամիտ աշխատութեան և խորին հմտութեան: Ազգային դատարարութեան գործին մէջ ևս պատկառելի ծերունին մեծ դեր ունեցած է իբրև բարձրագոյն ուսուցիչ հին հայերէնի ու բառապնութեան, և հարկերնով կը համարուի իր աշակերտները: Գիտնական քահանային կենքը լայնածաւալ է, խորազննիկ կենսագրականներու նիւթ մտապահարար, այն ամեն բազմապիսի երևոյթներուն ներքե, որոցմով կը ներկայանայ ի միջի այլ և այլ հոգեր պաշտօններու, Հիւնքեարայէլեանեան հայրը վարած է Պարթիկ հայոց հոգեոր հովուութեան պաշտօնը երկար տարիներ»:

Սեղ հարողում են, որ թիֆլիսի Հաւաքար թաղի հայոց քահանաների հիմնաւոր բողոքները ազդեցութեան տակ, գործակալ Համազասպ քահանայ Տէր-Յովհաննիսեան հրաժարեցովց իր պաշտօնից: Ծառ ուրախ ենք, որ արդար և հիմնաւոր բողոքները այս անգամ ազդեցութիւն գործեցին և ըստ սովորականին չը մնացին «ձայն բարբառոյ յանպատեր»:

Պարսկաստանի Քոչան քաղաքից մեզ գրում են, «Ամսիկ 5-ին, ժամը 11-ին, այստեղ աստիկ երկրաշարժ տեղի ունեցաւ. 8.000 տնից բաղկացած քաղաքը համարեա աւերակ է դարձել: Բաւականի մարդիկ են մեռած, որոնց թիւը դեռ յայտնի չէ: Դիակները թաղված են միմեանց վրա, ժողովուրդը մնացել է դուրսը: Միզիթը, որ բաւական ամուր շինած էր, կործանվել է: Աւերական հայերը մնացել են անվնաս»:

Ներկայ թվականի «Մշակի» մի օրինակ իւսահակ թաղեցանց նուիրեց Եռու Բարեգործական ընկերութեան զբաղարանին:

Իշխան Չախարի Երիտօլի, ինչպէս հաստատ ազդերներէր հարողում են «Новое Обозрение» լրագրին, երեք ստեղծողներ է հիմնում Օղէտայի համալսարանում վրացի ուսանողները համար, թիֆլիսի և Քուրթայի նահանգներէր:

Պետերբուրգից «Кавказ» լրագրին հեռագրում են, որ պետական խորհրդում ընտնվում է Երևանի նահանգի սոցալեակութեան պաշարեղէն պետքերի համար զահանգարանից 125 հազար ռուբլի փոխաւորութիւն տալու առաջարկութիւնը:

Այս օրերս վախճանված Երիկին Ե. Սուրենեանի դաւակնելը, ի յիշատակ իրանց հանգուցեալ մօր, հետեւեալ նուէրներն են արել. Կաթողիկոսի արքայազնութեան ներքո՝ 200 ռուբլի, Բարեգործական ընկերութեան՝ 100 ռ., հայ հոգեոր

րականների ապահովութեան զահանգարանին՝ 100 ռ.: Կուսնաց մեծասանին՝ 50 ռուբլի և Հայուհեաց ընկերութեան՝ 50 ռուբլի:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են. «Ամսիկ 6-ին, Խանդավերեանցի թատրոնական դահլիճում, Մարիինսկի օրիորդական ուսումնարանի օգտին տօնածաւարը հոմակները գները մատչելի լինելով՝ բուրբ վաճառված էին: Դժբաղդաբար հանդէսը լուսնացաւ, շնորհիւ մի երկու անախորժ դէպքերի, որոնց պատճառը թեմական զպրոցի ուսուցիչներէր մէկն էր Ջ. աղբանուտով: Չարժէ նկարագրել այդ անվայել արարքները, բայց չէ կարելի չը դարձնել, որ նոյն իսկ ուսուցիչ մարդը պատճառ է դառնում մեծ անախորժութիւնների և այն էլ զպրոցական—հասարակական հանդէսներում»:

ԿԱՐՄԻՅ մեզ գրում են. «Ամսիկ 4-ին հրդեհ եղաւ, որից այրվեցան 3—4 կրպակներ: Առանձնապէս վնաս հասաւ մի անձի, որի ամբողջ ունեցածը զոհ դարձաւ կրակին: Հետեւեալ օրը բարեխէր անձինք նուէրներ հաւաքեցին յօգուտ այդ վնասված պարտի: Ասում են, որ հանգանակած դրամը հասնում է չորս հարիւր ռուբլու: Ի դէպ միջի, որ մի բարեբաղդութիւն էր, որ կրակը բաւականացաւ այդքանով, որովհետեւ այստեղի հրդեհաշիջեցիչները վրա յոյս դնել միանգամայն անմտութիւն է: Ծառ ցանկալի է, որ մի րէ վիւրիս նշանակվի իմանալու համար, թէ որքան կազմ և պատրաստ վիճակի մէջ է տարէնը մի քանի հազար ռուբլի ծախս նստող հրդեհաշիջ վարչութիւնը, որը օրհնութիւն պէտք է հասնի մեզ մեր նեղ օրին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսի լրագրներում տպագրված են հետեւեալ ուշադրութեան արժանի տեղեկութիւնները:

«Գ. զորքանակի հրամանատարն և Պիլիլիսի կուսակալութիւնը ծանուցած են թէ քիւրտի հագուստ կրող երեք հայեր սպաննելու դիտաւորութեամբ վիրաւորած են Բարսեղ քահանայն, որովհետեւ սա իմաց տուած էր թէ Մուշի մէջ հայոց վարժարանին շրջակայքը վնասակար թուղթեր կան և առաջնորդած էր անոնց գրաւմանը, թէ Արիստով մէջ հիւն հայեր կողոպտած են վաճառական Պողոս Էփէնտիի զոյքերն ու դրամները, թէ Մուշի շրջակայքը քիւրտի հագուստով հայ մը ձեռքակալուած է և թէ ոստիկանութեան պաշտօնատան մէջ անոնց յայտարարութիւնները արձանագրուելով յանցաւորները յանձնուած են դատական իշխանութեան: Ուստի կը ծանուցուի թէ ասոնց նոյն իսկ իրենց քահանաներուն նըկատմամբ ալ կը դեռնական նպատակ մը ունենալը իրենց աւագակութեան աստիճանը կապացուցանէ:

«Վ. անայ հեռագրական ու թղթատարական ընդհանուր տնօրէնի շրջանակին մէջ գտնուած կայարաններու մէջ հարողակցութիւնը աւելցած ըլլալով, որ և է յապաղման տեղի չը տալու համար մէկ մէկ պաշտօնեայներ պիտի աւելցուին Պիլիլիսի, Մուշի, Սեբրդի և Պայաղտի հեռագրական ու թղթատարական կայարաններուն մէջ:

«Ե. երբէն գործող նախարարութիւնը հրահանգ ուղղելով դաւաճելը՝ ծանուցած է, որ Օսմանիյէ թէքէթիսիները կըբուրին թէ Խաթիբ ժողովներուն և թէ մարդահամարի տեսուչներուն կողմէ, գիտնալով որ հակառակ պարագային մէջ ձեռնհաս պաշտօնեայք պատասխանատու պիտի մնան: Նոյնպէս, թէ մինչև հիմա գտնուած այն Օսմանիյէ թէքէթիսիներն, որը միայն մարդահամարի տեսուչին կողմէ կըբուրած են, երբ տէրերուն կողմէ դիմում ըլլայ՝ Խաթիբ ժողովներու կողմէ ալ կըբուրին»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՏՅՈՒՅ

Կ. Պոլսի, յունվարի 9-ին
Եթէ վաղը տարափոխիկ հիւանդութիւն մըն արիւնթիւնն ալ արդեօք փոխանցելի չէ, պատասխանը կրնանք գտնել Պոլսոյ Հայերուն այս քանի մը օրուան հոգեկան օրհնութեան մէջ: Ամեն մարդ զուլիս բարձրացուած է, ու պատրիարքարանը դարձեր եղեր է կենտրոնակայր մը, ուր կը

ձգտին քիչ մը սիրտ առնելու տնչաքողները:

Ծնունդին երկրորդ օրն էր, որ պատրիարքը հանդիսաւոր ընդունելութիւն պիտի ընէր իրեն շնորհաւորութեան եկողներուն: Ներսիս օրերուն կարգ կանոնները պիտի վերականգնանային, ու պատրիարքարանը պաշտօնապէս ծանուց նոյն օրուան հանդիսաւորութեան կարգադրութիւնները: Բայց կառավարութիւնը թող չը տուաւ որ օրագրիները հրատարակեն այդ յայտարարութիւնը և Ծնունդին աւտուն եկեղեցի դիմող հայերուն համար զարմացում մը եղաւ քահանային բերնէն իբր ծանուցում լսելով, ինչ որ վարժուած էր օրագրիներուն մէջ կարդալ:

Ու Ծնունդին երկրորդ օրը, շաբաթ, ահագին բազմութիւնը կը խնուէր պատրիարքարանը. հոն տեսանք մեծափարթամ հարուստներ, որոնք պատրիարքարանի դուռն իսկ չէին գիտեր. և սակայն վաղի վաղը եկած էին, վասն զի հիմայ հովր աղբասիրական է ու Արեւեան—Քիւրային մէջ զիտանական մարմինը չառ զփեստով կը խօսի նոր պատրիարքին վրա.— Պատրիարքին այցելած ըլլալ ու վրան խօսել զեսպանատան պաշտօնեաներուն, ինչ շիք գործ: Հոն էին ուսուցիչները, գրողները, արհեստաւորները, օրագրողները, վաճառականները, սեղանաւորները, ամենքն ալ Բագակայ էին էֆէնդիները: «Հային մեղը, հալածին դեք»:

Աղբային ժողովի անդամները ներկայացան առաջնորդութեամբ իրենց զեր—առնեսպետին, Պերպէրեան Պ. Աթէնայի, որ ճիշդ հանրային զգացումը բացատրող տեսնաբանութիւն մը ըրաւ, ու պատրիարքն ալ պատասխանեց այն ոգիով, որմէ ներշնչուած կը խօսի ամեն օր, ամեն տեղ ու կը ներշնչէ: Կրօնական ու Բարաքական ժողովներ, սեսուչ խորհուրդներ, թաղականներ, ամեն պաշտօնական մարմիններ եկան ու եկան:

Բայց հանդէսին մեծաշուք մասն էր պաշտօնական բարձրաստիճան անձնաւորութեան լիակցայնը. պատրիարքարանը իր գոյութեան մէջ երբէք Մընուսի մը այսօրինակ զուգադիպութեան չէր հանդիպած:

Յունաց տիեզերական պատրիարքին տեղապահը—պատրիարքական ընտրութիւնը դեռ չէ կատարուած—եպիսկոպոսներով ու վարդապետներով եկաւ շնորհաւորութեան պատրիարքին: Մեծ դահլիճին մէջ նստած էր, երբ հասաւ Ռուսիոյ դեսպան Պ. Նիկիտով, որ մտաւ սրտած և ի տես մեր պատրիարքին, յունաց տեղապահին, որ կը խօսէր երկու քոյր եկեղեցիներու վրա, պ. Նիկիտովի որ լաւ յունարէն դիտէ, ըսաւ. «հոս երեք կողայրներ ենք», քիչ յետոյ հասաւ Ֆրանսայի դեսպան պ. Բամպու, ու անիլիպպէս ետեկն բողոքական հասարակութեան ազգապետ պ. Գալիթ Պոյաչեան. ամենքն ալ իրենց աստիճանին համեմատ մեծարուեցան ու յարգուեցան: Յունաց տեղապահը յետոյ ըստ սովորութեան Մայր—Եկեղեցին ինչնով ազօրեց:

Ընդունելութիւնը շարունակեց կիրակի օրն ալ: Պոլսոյ խանդավառութիւնը գուցէ հոստոսական նկատեք ու անկարեօր, բայց ապրելու էք այս միջնորդին մէջ ըմբռնելու համար, թէ պատրիարք մը այդ ուղեորութեան միջնորդին պէտք ունի, որպէս զի իր հոգեկան թախը աւելի բարձրանայ: Ու ըսնք նաև որ հայերու օրինակը սկսած է ազդեցիկ ըլլալ և Յոյներուն, Հռօմէացիականներուն և նոյն իսկ Յաճիկներուն վրա:

Գեսպանական այցելութիւնները արտակարգ տպագրութիւն մը կը գործեն, լուրը կը տարածուի մինչև Հայաստանի խորքերը, ուր շատ բան զաղտնի կը մնայ—հոն է, որ այս մէկ քանի միւսներ ամենէն աւելի քաջալերութեան, սրտապիղծման պէտք կայ:

Ու այդ ուղեորութեան հետեանքը չէ՞ Գրան կողմէն նորընտիր կրօնական ու Բարաքական ժողովներուն չառափոյթ հաստատութիւնը: Կասկած մը կար որ Գուռը պիտի դժկամակի վաւերացնել ժողովները, որոնցմէ արտաքուստ են էֆէնտիները. պատրիարքը իր ժով կանչելով դուրան գործակատար Ֆրէնկեան, ըսաւ.
—Կերթաւ դատական և կրօնական գործերու նախարարին կրօն, թէ ևս յունուար 11-ին նստի պիտի հրաւիրեմ նորընտիր ժողովականները, հաստատութիւնը դալ թէ չէ, եւ չիմ կրնար երեսի վրա թողուլ ազգային գործերը:
Ֆրէնկեան պատասխանատուութեան ներքե էր. զնայ յայտարարութիւնը ըրաւ, երկու օր վերջը վաւերացումը հասաւ»

Երբեմն Գարու թիւն ու Աշգրեան պատրիարք- ներու օրով ամբողջ կանցնելին մինչև վաւերաց- ման զարը:

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԻՆՆԵՐ

Կ. Պօլիս, Յունվարի 11-ին

Սրտան ամենամեծ լուրը, զոր հեռագիրը հաղորդեց ձեզի այ, պատրիարքարանի միջամե- առնութիւնն է Սասունի կոտորածին: Յունուար 9 երկուշաբթի օր Մատթէոս պատրիարք պաշտօ- նազարով մը հաղորդեց Ղրան թէ՛ պէտք է, որ պատրիարքարան ալ պատգամաւոր քննիչ մը զը- կէ Սասունի քօմիտիօնին, վասն զի Մուշի առաջ- նորդը երեք տարի է ի վեր ըսնտն է, ինչպէս ուրիշ առաջնորդեր ալ, և այսպիսի վիճակի մը մէջ եկեղեցականները չեն կարող առաջնորդու- թիւն ընել:

Այս առթիւ պատրիարքը կը յայտարարէ թէ՛ պաշտօնի գլուխ անցած պահուն կը զանէ սու- կարի կացութեան մը առջև, անպիսի տեղեկու- թիւններ ունի, սակայն իրեն վերապահելով անոնց մասին բողոքելը, առաջմ անմիջապէս կը զբաղի Սասունի խնդրով, որը սարսափելի յու- զում առաջ բերած է ժողովրդին մէջ:

Այն պահուն երբ այս գիրը Ղրան կը ըրկուէր, կայսերական պալատն ալ Միւնիք պէյ պատ- րիարքարան կուգար սուլթանին կողմէ բանակ- ցելու պատրիարքին հետ. անսակցութիւնը տե- ւած է 2 ժամ Յաջորդ օրը զարձեւել կիւս է, այս անգամ պատրիարքը կարճ կ'ապեց: Այս այլը շատ կարեւոր է:

Հանրաձայնութիւնն պէյ Մագուտ, որ ութը ամիս առաջ վերադարձեցաւ, երկէ մեռաւ. զըն- տակը չէին կրցած զուրս հանել, վերջ մը զոյա- ցած էր. անկէ զնաց:

Պատրիարքին հրաւեր եղաւ ներկայ գտնուիլ յուղարկարութեան. մերժեց: Միջնորդներ զացին աղաչելու, դարձեալ մերժեց:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական նոր նախագահի քաղաքա- կան ուղղութեան մասին կարելի է մտածել դա- տել այն ճառից, որ նա արտասանեց իր ընտ- րողների առաջ 1893 թ.ի նոյեմբերի 5-ին: Այդ ճառի մէջ Ֆոր յայտարարում էր իրան ազատա- միտ հանրապետական և արմատականութեան հա- կաւարտող, որը ոսկէ սարեր է խոստանում ժո- ղովրդին, բայց ոչ չէ չէ տալիս նրան, նոյնպէս չէ կատարում եկեղեցին պատմութեանց բաժաննե- լու իր խոստումը: Ֆոր յայտարար է իրան չզօրեղ կառավարութեան կողմնակից, այսինքն այնպիսի կառավարութեան, որի անդամները միանման ձգտում և ընդհանուր սրբորած ունեն: Մի և նոյն ճառի մէջ Ֆոր անհաշտ պատերազմ էր յայ- տարարում սօցիալիստներին:

Աթէնքում միտինգներ են անդի ունենում հարկերը մեծացնելու դէմ:

Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ ներումն կը շնորհի Բոչֆօրին և Ժէրօին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԱՐԻՉ, 16 յունվարի Նոր միմարտութեան առաջին քայլը կը լինի՝ պատգամաւորների ժո- ղովում առաջարկութիւն մտցնել ներումն շնոր- հելու քաղաքական յանցաւորներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Այսօր, յունվարի 17-ին, կէսօրից յետոյ 2 ժամին, Չմերային պա- լատում տեղի ունեցաւ եկամ պատգամաւորու- թիւնների կողմից շնորհաւորութիւնների մատու- ցումը Նոցա Մեծութիւններ թագաւոր կայսրին և թագուհու կայսրուհուն Նոցա պապականութեան ատիթով: Յերկուշաբթի ժամին պատգամա- ւորութիւնները գումարկեցին Չմերային պալա- տում, որի համար բացված էր Յօրդանանան հո- յակապ մուտքը: Երկրորդ ժամի վերջում Նիկի- ականական դաշխիճում հաւաքվեցին պատգամաւոր- ութիւնները ազնուականութեան, զէմտօրի, քա- ղաքային վարչութիւնների կողմից և զինուորա- կանները: Այդտեղ եկան և ներքին գործերի ու զինուորական միմարտները՝ Գուրնով և Վան- յուօնի և մի քանի ուրիշ բարձրաստիճան ան- ձինք: Նիկիականական ահաջին զանգից, զանգից, զանգից երկարութեամբ երկարող կանգնե- ցին պատգամաւորութիւնները: Այլ կողմը կանգ- նած էին ազնուականութեան պատգամաւորու- թիւնները, իսկ զրանց կողքին քաղաքային հաս- րակութիւնների պատգամաւորութիւնները: Չմի կողմը կանգնեցին զինուորա- կան պատգամաւորութիւնները: Պատգամաւորու- թիւնների ետևը, սերանների վրա զրված էին թմազային սկուտեղներ աղ ու հացով. սուրբ պատկերներ և պատգամաւորութիւնների կողմից ներկայացրած ուրիշ ընծաներ: Նիկիականական պատգամաւորութեամբ էր բաց բուֆետ: Երկու ժամին Նիկիականական դաշխիճը մտաւ թագաւոր կայսրը, ուղեկցու թեմաթի մինիստրի, ներքին գոր- ձերի մինիստրի, Պայատի մինիստրի օգնական բարոն Յրեղէրիկի և հօթ մարշալ կոմս Բէնիկէ- ղօրֆի: Բարձրագոյն ելքի առաջ գնում էր առա- ջին արեւ-ցերեկային իշխան Գոթօրուկի: Նորին Մեծութիւնը պիտի արժարարէ նրան զնրի զնրա- պետի համադրեալ ունէր հոգած, Անդրեանի ժապաւնով: Հասնելով մինչև դաշխիճը միջոցը, թագաւոր կայսրը զիմաց պատգամաւորութիւննե- րին մի ձայնով:

«Թագաւոր կայսրի ձայնը, որ անց ազնուակա- նութեան, քաղաքների, զէմտօրների և զինուորա- կան պատգամաւորութիւնների ընդունելութեան ժամանակ, որոնք եկին էին ամբողջ Ռուսաստանից՝ հաւատարիմ հպատակութեան զգացմանը, յայտնուեցաւ համար Նոցա Մեծութիւնների պա- կազրութեան ատիթով:

«Ես ուրախ եմ տեսնել բոլոր դասակարգերի ներկայացուցիչներին, որոնք գումարով են հա- ւատարիմ հպատակութեան զգացմանը արտա- յայտելու համար: Հաւատում եմ այդ զգացմանը՝ ների անկեղծութեանը, որ ի սկզբանէ յատուկ է իւրաքանչիւր ռուսին. բայց ինձ յայտնի է, որ վերջին ժամանակներս մի քանի զէմտօրների ժողովներում լսվում էին անմիտ ցնորներով յափշտակող մարդկանց ձայնը՝ զէմտօրի ներ- կայացուցիչների մասնակցութեան մասին ներքին կառավարութեան գործերում: Թող բոլորը զիտե- նան, որ ես նուիրելով իմ բոլոր ոյժերը ժողով- րդի բարօրութեանը, կը պահպանեմ ինքնակա- լութեան սկզբունքները նոյնպէս ամուր և ան- շեղ, ինչպէս պահպանում էր իմ անմտանայի հանդուցեալ Կոնստանդինը:

Թագաւոր կայսրի խօսքերը ծածկվեցին ներկայ եղողների ոգևորված շարժումով, որոնք երկար ժամանակ լինեցին իրենց զանգից: Այս Նորին Մեծութիւնը անցաւ կոնցերտային դաշխիճը. այդ- անկ քաղաքային ներքին անեակներից զուրս գալ թագաւոր կայսրուհուն Նորին Մեծութիւնը կրում էր ս. Եկատերինէի ժապաւնու: Այսօր շնորհաւորութիւնների մատուցումը պատգամաւոր- ութիւնների կողմից: Թագաւոր ետևը կանգնած էին հօթման իշխաններ իշխանուհի Վիլիցին և Ֆրէյլինա կոմսուհի Լամպրօֆ: Առաջին շնոր- հաւորութիւններ մատուցին պատգամաւորութիւն- ները ազնուականութեան կողմից, իսկ զրանցից յետոյ պատգամաւորութիւնները զինուորականնե- րի, զէմտօրների և քաղաքային հասարակութիւն- ների կողմից: Պատգամաւորութիւններին ներկա- յացում էին թագաւոր կայսրին ներքին գործերի և զինուորական միմարտները: Սուր պատկեր- ները մատուցանելու ժամանակ թագաւորը համ- բուրում էր պատկերները: Ազնուականութեան կողմից պատգամաւորութիւնների թիւը հասնում էր 49-ի, զէմտօրներից նրանց թիւը 26 էր, քա- ղաքային հասարակութիւններից 131 և 21 զին- ւորականներից: Շնորհաւորութիւններ մատուցա- նելու վերջը Նոցա Մեծութիւնները ներքին սե- նեակները մտան Հինգրուրդ ժամին ազնուակա- նութեան նահապետական պարագայները, զա- ւաւական պարագայները և ազնուականները, որոնք պատգամաւորութիւնների անդամներն էին, պայատից զնացին կազանակի տաճարը, ուր զո- հացողական մաղթանք կատարեցին՝ պատգամա- ւորութիւնների կողմից. շնորհաւորութիւններ մա- տուցանելու ժամանակ Նորին Մեծութեան սասած լազմաւորները խօսքերի ատիթով:

«Նով. Վրեմյա» լրագրի ստացած տեղեկութիւն- ների համեմատ, բողոքական իշխանութիւնները ամեն ջանք գործ են դնում՝ խափանելու Յան- կովի և կարգվելով ըւտրութիւնը:

ՊԱՐԻՉ, 17 յունվարի: Վախճանվեց մարշա- կանորդերը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՒՄ Յունվարի 17-ին

Լճուօնի վրա 10 ֆունտ արժէ . . . 93 ր. — 4. Բերլին վրա 100 մարկ . . . 45 > 50 > Պարիզի վրա 100 ֆրանկ . . . 36 > 85 > Ոսկի . . . արժէ . . . 7 > 43 > Մաքային կուպոններ . . . 147 > 75 > Արժաթ — > — > Բորսային դիվիդենտ . . . 5 > 70/0 > Պետ. քանկի 5% տուս 1 շրջանի . . . — > — >

Table with financial data, including interest rates (2-րդ, 3-րդ) and various percentages (4 1/2%, 5 1/2%) related to government bonds and bank operations.

Թիֆլիսի — — — 98 > 25 > Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 98 > 50 > — — — Բուխարայի — — — 98 > 75 >

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՐ Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻՔ-ԱՂԱՍՏԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՇԱՏ ԵՐԿԱՐ» պատմական վեպ երկու հատորից, զինն է 1 ընդ. 50 կող. զուգարով գնողներին զի- ջուսն: Գլխի կենտրոնական գրավաճառանոցին կամ հեղինակին՝ Тифлисть, Эчмиадзинская улица № 20, Баграту Айвазянцу. (№ 7) 1—3

1895 ԹԻՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԵՆԻՔ» Օ Ր Ա Գ Ի Ր Բ Ա Ղ Ա Բ Ա Վ Ա Ն Ե Ի Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է Կ ՊՈԼՎՈՒՄ ԱՄԵՆ ՕՐ (ԻԶ ՏԱՐԻ) Բաժանորդագրին է 25 ֆրանկ Հասցէն՝ Rédaction du journal «HAIRENIK». Galata, Constantinople. 1—4

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1895 ГОДЪ НА ЕЖЕДНЕВНУЮ ТОРГОВО-ПРОМЫШЛЕН., ПОЛИТИКО-ОБЩЕСТВЕННУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ «АСТРАХАНСКИЙ ВЪСТНИКЪ» ПОД ПИСНАЯ Ц Ъ Н А: Съ доставкою въ городѣ: на годъ—7 р., на 6 м.—4 р., на 3 м.—2 р. 50 к., на 1 м.—1 р. Для иногородныхъ: на годъ—7 р. 50 к., на 6 м.—2 р. Въ розничной продажѣ отдѣльные №№ по 5 к. Объявленія и подписка принимаются въ Астрахани: въ конторахъ редакціи и «Астраханскаго Вѣстника». Адресъ: Астрахань. Редакція изд. «Астраханскій Вѣстникъ». 1—3

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ. «Շ Ա Ի Ի Ղ» ԱԶԳԱՅԻՆ ԿՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ (ԵՐԿՐՈՐԳ ՏԱՐԻ) Հրատարակվում է Թէհրանում «Շաիրի» բաժանորդագրին է մէկ թուան, կէս տարվան վեց զանս: Արտասահմանում՝ 3 ընդը կամ 8 ֆրանկ. կէս տարվանը 2 ր. կամ 4 ֆրանկ: Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետեւեալ հասցէով: Черезъ Баку, Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետեւեալ հասցէով. Téhéran, Rédaction «SCHAVIGH». 1—2

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1895-й ГОДЪ. На ежедневную, политическую, литературную, научную, общественную и коммерческую газету «ОДЕССКАЯ НОВОСТИ» ПОД ПИСНАЯ Ц Ъ Н А: Безъ доставки и пересылки: На 1 мѣсяць—90 к., на 3 м.—5 р. 50 к., на 6 м.—4 р. 50 к., на годъ—8 р. Съ доставкою и пересылкою въ другіе города: на 1 мѣсяць—1 р., на 3 м.—2 р. 75 к., на 6 м.—5 р., на годъ—9 р. ПОД ПИСНА П Р И Н И М А Е Т С Я : Въ Одессѣ: Въ Главной Конторѣ (на углу Риневской и Греческой) и въ отдѣльных Конторахъ (на Ланжероновской ул., собств. дома). 1—2

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎ ԲԵԱՆՑԻ Ընդունում է երթվել, կիսադիվիդենդի և գիշերովի աշակերտներ, Պատրաստում է գինեաղայի, բնական ուսուցմարանի, կաղեւների կորպուսի և այլ ուսուցմարանների համար: Սոջակի, Կանսոկայա փ. № 11. (№ 127) 5—10